Կարապետ Լենթեթեանց, Ս. Ադամբեանց, իւրաքանչիւրը տուել են 1 ռուբլ։ Իսկ Թ. Խաչատրեանց և Գրիգոր Տէր-Յովհաննիսեան իւրաքանչիւրը 1 ռուբլ 50 կոպէկ։ Ընդամենը 15 ռուբլ։

—

ՄՕԶԴՈԿԻՑ մեզ գրում են որ վերջին ժամանակները չատ յաճախ են սկսել կրկնվել հրդեհները այդ քաղաքում։ Ասում են որ դիտմամբ են կրակ գցում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Յայտնի պալատական քարոզիչ Շտէօկեր իբրև ռեյխստագի կանդիդատ Բերլինի մէջ մի խիստ ճառ արտասանեց հրէաների և ազատամիտների դէմ։ Վերջը նա ասաց. „աշխատանքը գուսարի սարիութենից ազատելը, ահա այն հարցը, որ մենք պէտք է վճռենք։ Մենք պէտք է ընտրութիւն անենք պտղատու, բարոյական և կրօնական գործունէութեան և գումարաւորների անսիրտ հարստահարութեան մէջ։ Պէտք է այդ երկուսից մէկը ընտրենք։ Մի խօսքով կամ միապետութիւն պէտք է ցանկանալ կամ մանանապետութիւն։“

Յայտնի սոցիալիստ Լիբինեխտ Ցիւրիխի մէջ մի ճառ արտասանեց, որի մէջ ի միջոյոց նկատեց, թէ թէպէտ իշխան Բիսմարկ ընկել է սոցիալական շարժման ընթացքի մէջ, բայց սոցիալական խնդիրների իրագործելը կարելի է միայն դեմոկրատական ճանապարհով։ Կանցլերը պէտք է ոչնացնի սոցիալիստների դէմ ուղղված օրէնքը, պատերազմական բիւդժետը, մի խօսքով պէտք է կատարելապէս սոցիալիստ դառնայ։ Իսկ պետական սոցիալիստ մնալով, նա ոչինչ աջողութիւն չի ունենայ։ Այդ կուսակցութեան անդամներից ոչ մէկը չի համաձայնի առաջնորդված լինել այն ձեռքով, որ ստորագրից արտաքոյ կարգի օրէնքները սոցիալիստների դէմ։

ՍԵՐԲԻԱ

—

Հաստատ աղբիւրներից հաղորդում են, որ սերբական իշխան Միլանի դէպի Էմս և Իշլ ճանապարհորդութիւնը ցանկալի նպատակին հասաւ և երևի շուտով Սերբիան թագաւորութիւն կը յայտնվի։ Վիէննայի „Tagblatt“ լրագիրը այդ առիթով հաղորդում է հետևեալ հետաքրքիր փաստը. բոլգարական իշխան Ալէքսանդր փորձեց խանգարել իշխան Միլանի գործը, պատճառ բերելով, թէ իր գրութիւնը Բոլգարիայի մէջ անտանելի կը դառնայ, եթէ դրացի բոլոր իշխանութիւնները թագաւորութիւն յայտնվին։ Այնու ամենայնիւ բոլոր դժուարութիւնները աշխատված են և „Tagblatt“ լրագրի կարծիքով, սերբական ընկերկչենան իր գործունէութեան հետևեալ շրջանի ժամանակ երևի կը վճռի Սերբիան թագաւորութիւն յայտնելու հարցը։ Այնուհետև հարկաւոր կը լինի վճռել մի բաւական դժուար հարց. արդեօք Օբրենովիչ ընտանիքի բոլոր անդամները պէտք է թագաւորական տան անդամների իրաւունքներ ունենան։ Սերբիայի գեսպանը Վիէննայի մէջ հրաժարվեցաւ իր պաշտօնից։ Նրա պաշտօնը կը յանձնվի Գրուիչին, որ առաջ Սերբիայի ներկայացուցիչ էր Կ. Պոլսի մէջ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆԻ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 օգոստոսի։ Թագաւոր կայսրը, կայսրուհին, թագաժառանգը, Մեծ իշխաններ Գէորգի, Վլադիմիր, Ալէքսէյ Ալէքսանդրովիչներ այսօր օրվայ $4^1/_2$ ժամին աջողութեամբ հասան Պետերգոֆ։

ԲԱԶԵԼ, 31 օգոստոսի։ Պրանդենբերգի փլատակի տակ թաղվեցաւ Էյմս լեռնային գիւղի մի մասը։ 150 մարդ վնասվել են։ Ամբողջ գիւղին փանգ է սպառնում Ագարնակութիւնը 10,000 հոգի է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 օգոստոսի։ «Новое Время» լրագրին հաղորդում են Բերլինից, որ իշխան Բիսմարկ ուուսաց դեսպան Սաբուրովի հետ ուղևորվել են Վարցին, որպէս թէ կայսրների տեսութեան հետևանքները որոշելու համար։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 սեպտեմբերի։ Այսօր դուրս եկաւ „Правит. Вѣстн.“ լրագրի հետ հրատարակվող „Сельскій Вѣстн.“ ժողովրդական շաբաթաթերթի առաջին համարը։ Բաժանորդական փնաը մինչև տարվայ վերջը 1 ռուբլի է։ Գիւղական փարշուիներին լրագիրը ձրիաբար է ուղարկվում։ Բարձրագոյն թոյլատրութեամբ առաջին բաժնի կառավարիչ սատոսսեկրետար Ֆոնեեվ ուղարկեցաւ արտասահման։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 սեպտեմբերի։ Պետական բանկի $5^0/_0$ տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ռ. 75 կ., երկրորդ 94 ռ. 37 կ., երրորդ 94 ռ. $75^1/_2$ կ., չորրորդ 93 ռ. $87^1/_2$ կ., ներքին առաջին $5^0/_0$ փոխառութեան տոմսակը արժէ 228 ռ., երկրորդ 222 ռ. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ռ. $7^1/_2$ կ., երկրորդ 90 ռ. $75^1/_2$ կ., երրորդ 91 ռ., ոսկի 7 ռ. 60 կ.։ Ռուսաց 1 ռ. Լոնդոնի վրա արժէ 25,97 պենս, ուուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 222 մարկ, 62 պֆ., Փարիզի վրա արժէ 274 ֆրանկ 50 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 սեպտեմբերի։ Ներքին $5^0/_0$ երկրորդ փոխառութեան տոմսակների խաղարկութեան ժամանակ տարան։

№№ սերիի		№№ տոմսակի		տարված գումար.
8,414	—	32	—	200,000
17,003	—	10	—	75,000
9,333	—	38	—	40,000
10,564	—	14	—	25,000
5,944	—	11	—	
19,113	—	37	—	10,000
12,285	—	34	—	
8,461	—	1	—	
9,810	—	37	—	
2,915	—	30	—	8,000
5,613	—	9	—	
18,967	—	7	—	
1,956	—	33	—	
13,471	—	24	—	
2,710	—	37	—	
4,437	—	40	—	5,000
1,899	—	5	—	
19,280	—	3	—	
5,708	—	9	—	
16,065	—	16	—	
4,653	—	24	—	
2,261	—	32	—	
2,570	—	8	—	
7,554	—	38	—	
17,906	—	31	—	
5,227	—	10	—	
8,370	—	47	—	
7,745	—	16	—	
3,608	—	20	—	
15,262	—	37	—	1,000
14,865	—	12	—	
12,282	—	50	—	
8,575	—	23	—	
16,743	—	14	—	
5,109	—	10	—	
19,877	—	24	—	
3,121	—	36	—	
1,737	—	14	—	
5,551	—	16	—	
12,098	—	42	—	

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿԻՆԻ

մէջ կոիւ. ահա յաղթութիւն, ահա պարտութիւն։ Այս, խմբագրական յանձնաժողովը արդէն չատ դիջումներ արաւ և այդ ինքը լաւ նկատում էր— երբ բանը հասաւ ամենաքիչ հոդաբաժին սահմանելուն, այդտեղ նա վճռեց այլ ևս դիջումներ չանել, ինչպէս էլ բողոքէին չորս կողմից։ Իրան մխիթարելու համար նա սկսում էր թեթևութիւն տալել և ջանում էր մի կերպ արաձները արդարացնել. օրինակ նա հաւատացնում էր, որ գիւղացին, միայն թէ նա ազատ լինի, կարող է լաւ ապրել և փոքրիկ հողաբաժնում, նա մանաւանդ որ սահմանող գիւղերը ինչպէս և լինէին ընդհանուր երեսոյթ չեն լինելու. ուստի կարելի է չատ էլ չը մտատանջվել։—

IV

Բայց կալուածատիրական օգուտների ներկայացուցիչները չէին կամենում բաւականանալ այս զիջումներով։ Նահանգական մանաժողովները պատրաստել էին վարչց կալուածատէրի համար մի արաձնութիւն ևս, որ գիւղացիներին հող ներչանակելուց՝ նախապէս ապահովված լինի բոլոր կալուածքի մի յայտնի մասը, իբրև կալուածատէրի անխառն և կատարեալ սեփականութիւն։ Թէ ինչ չափով պէտք է բաժանումը կատարել—դա զանազան կարծիքներ ծնեց. ով առաջարկում էր $^1/_3$, ով $^1/_4$, $^1/_2$ և $^2/_3$ մասը։ Խմբագրական յանձնաժողովը խոստովանում էր, որ այդ կանոնի գործադրութիւնը մեծ վնաս կը տայնի գիւղական չարերին, քչացնելով չատ տեղերում և կալուածներում առանց այն էլ սակաւաչափ հողաբաժինները։ Չը նայելով այդ խոստովանութեան յանձնաժողովը ընդունեց կալուածատիրոջ համար հող մի յայտնի չափի յետ թողնելու կանոնը և ընդունեց, իր սեփական խօսքերի համեմատ, «ելիջանելով միայն և եթէ բոլոր նահանգական մանաժողովների համաձայն պահանջին, նոյնպէս ցանկալով, կարելիութեան չափ, առաջն առնել այն բանին, որ կալուածատիրոջ կապը հողի հետ չը քանդվի»։ Կալուածատիրոջ անմիջական կարգադրութեան համար յանձնաժողովը վճռեց պահել հողի մի երրորդականը, որ և մտաս 19 փետրվարի կանոնադրութեան մէջ։ Բայց պէտք է նկատել, որ այդ երրորդականը կազմելու համար չատ տեղ բաւական էր կալուածատիրոջ իսկական հողը, այնպէս որ գիւղական հողը չէր չարժվում։

Չարկաւոր եղաւ անել և մի զիջում, որը գործնական կեանքում մեծ նշանակութիւն ունենար, իսկ սկզբում այնքան պարզ հասկանալի չէր վնում և մանաւոր դէպքերում բարեբարութեան ձև էր մինչև անգամ սատանում։ Մենք ակնարկում ենք այն յօդուածի վրա, որ թոյլ տուաւ մասնաւոր կերպով հաստատելու կալուածատիրոջ ու գիւղացիների մէջ եղած յարաբերութիւնները, նուիրելով ձրիապէս գիւղացիներին հողի մի անշնչ մասը (մաս մի չորրորդականը—$^1/_4$ նշանակվածի) և այդպիսով նրանց միշտ կախված պահելով կալուածատիրոջ հողից։ Այդպիսի հողաբաժինները յայտնի են քառորդական կամ ձրի հողաբաժին անունով։—Գիւղացին առաջին անգամից կարծես գրավվեց այդպիսի կարգադրութեամբ, որովհետև այնպէս էր դատում թէ աւելի լաւ է հողի մի մասը ձրի ստանալ սեփականութիւն, քան թէ մեծ հող առնել և նրա համար վճարել տարեկան մի նշանաւոր գումար։ Հետեանքը ցոյց տուաւ իսկ առաջին քայլերում, որ նրանք հանարեա անհող մնալով տոիված եղան անպատճառ՝ իրրև սարիկներ, իրրև կապված մարդիկ, աշխատել կալուածատիրոջ հողում։

Այստեղ մէջ բերենք Գ. Սամարինի կարծիքը ձրի հողաբաժինների կազմվելու մասին. նա ևս դրանց համարում է չատ վնասակար գիւղական տնտեսութեան համար։ Ահա նրա խօսքերը։ «Սեանհող կենտրոնական խիստրնակ նահանգներում իրանք գիւղացիները թանգ էին գնահատում իրանց հողը և պակասութիւն էին զգում նրա մէջ. ուստի նրանք չէին կարող գրավվել առաջարկութիւններով (եթէ զրանք լինէին էլ) ստանալու ձրիապէս՝ հողաբաժնի մի չորրորդականը այն պայմանով, որ նրանք հրաժարվէին մնացած հողից. դրանով բացայայտվում է թէ ինչու Ռուսաստանի այդ մասում համեմատաբար քիչ գիւղացիներ կան քառորդական (ձրի) հողաբաժնով։ Բայց սեահողի արևելեան և հարաւային բաժանող նահանգներում պայմանները բոլորովին այլակերպ էին. և այն յօդուածը անտեղ ստացաւ. նա մանաւանդ առաջին անգամ, լայն գործադրութիւն։ Այս սակաւաթիւ երկրներում գիւղացիները հաստատված էին, որ նրանք միշտ կարողութիւն պէտք է ունենան հող վարձել յարմար գներով և բան այնում ում. որչափ հարկաւորվի, առանց միմեանց համար պատասխանատուութեան. մի և նոյն ժամանակը նրանք լայն ուշէին, չը նայելով, որ նրանք հրաժարվում էին հողից, չուտ թէ ուշ դարձեալ հող ստանալ, երբ կը հրատարակվի վատաբեալ ազատութիւն։ Ուստի միշտ տեղերում երկու ձեռքով բռնեցին այդ 123 յօդուածը, որ կարդացվելիս էր տալու մինչևամիջ դադարեցնել թէ բռնի մշակութիւնը և թէ տուքը. իսկ նրանք կազմում էին ամենագլխաւորը որ նրանք չաղկապում էին՝ իրանց մտքում՝ ազատութեան գաղափարի հետ։ Ահա ինչու Ռուսաստանի այս մասում ոչ թէ կալուածատերերն էին համոզում գիւղացիներին ընդունելու ձրի հողաբաժիններ, այլ իրանք գիւղացիներն էին հաստատապէս պահանջում կալուածատերերից, որ սրանք տային նրանց հարքայական գեսեատինան (այսպէս էին նրանք անուանում ձրի հողաբաժինը)։ Այդ ուղղութեամբ սկսված շարժումը գրաւեց բոլոր Պոլտաւայի գիւղական ազգաբնակութիւնը և այնպէս ուժեղ էր, որ թափանցեց և ուղեկցեցի գիւղացիների մէջ. որանք պատանդում էին նոյնպէս աղքատական գեսեատինա տալ նրանց... ծագեցան անկարգութիւններ և անհնազանդութիւններ.... Այդպիսի ոյժով գիւղացուն պատած շարժումը ստիպեց կալուածատերերին խոնարհել նրա առաջ.... Այստեղ կալուածատերերը չէին, ուրեմն, դրդում այդպիսի յարաբերութիւններ ստեղծելու.... Ի հարկէ կային մի քանի կալուածատերեր, որոնք չէին համաձայնվում գիւղացիներին հող տալ—յետ գնելու, թոյլ էին տալիս հողաբաժնի միայն մի չորրորդականը նրանց ընծայել. բայց սրանք բոլորովին բացառական և հազիւ պատահմունքներ էին կալուածատերերի, որոնք կարողանալիս արհամարհել ժամանակաւոր վնասը և ցանկանալիս, որչափ կարելին է, մեծ հող պահել կալուածքում. յուսալով որ նա անպատճառ կը թանգանայ յետոյ։ Արանք բղխում էին այն չրջանից, որի ջանքերի շնորհիւ այդ յօդուածը մտել էր կանոնադրութեան մէջ։ Զրի հողաբաժին ունեցող գիւղացիների գումարը (70%) կազմվել է առաջին 3 տարիներում. իսկ նրանից յետոյ չատ քիչ ման է անցնում չորրորդական հողաբաժնի, որովհետև պատգամները միայն յետոյ տեսնվեցան, երբ խեղճ գիւղացին իր չլինքով համոզվեց, որ դա իր թշուառութեան աղբիւր միայն կարող է դառնալ։

Չը նայելով այն զիջումներին և փոփոխութիւններին, որ համաձայնվեց անել խմբ. յանձնաժողովը—ներկայացուցիչները այնպիսի բողոքներ բարձրացրին, այնպիսի յարձակողական ճառեր կարդացին, այնպիսի յօդուածներ գրեցին նրա դէմ, որչափ միայն կարելին էր Ռուսաստանում։ Մարդ, ճշմարիտ, զարմանում է թէ որչափ կարելի է մոռանալ սեփական օգուտների համար ընդհանուր չաները։ Ներկայացուցիչները հաւատացնում էին, որ կարելի էր գեռ չատ և չատ պակասեցնել գիւղական հողաբաժինները, որ դա ոչ ոքի չէր վնասի, իսկ գիւղացին բոլորովին բաւական կը մնար։ Հետաքրքիր է ընթերցասիրել պատմութեան այդ երեսը, ուր փաստերը և թուները կամա ծալվում են եղել, որ ապացուցանում են եղել թէ գիւղացին կարող է, ով գիտէ, օրով ես ապրել։ Ի բաւ նրանց պահանջները յայտնում էին, որ 1) հարկաւոր չէ որոշել հողաբաժնի ամենափոքր սահմանը, որ պէտք է տայ կալուածատերը անպատճառ գիւղացուն. 2) պէտք է կալուածատիրոջ մտա թողնել ոչ պակաս $^2/_3$ կամ $^1/_2$ բոլոր կալուածքի. 3) այդ $^2/_3$ կամ $^1/_2$ պէտք է բաց առնել անտառները—Ի հարկէ այդպէս խմբագրութիւն ընդունելը անկարելի էր. գեռ արաձներն էլ չատ և չատ փոխվել էին առաջին ծրագիրներից։

(Կը շարունակվի)